

# Խաղաղութիւն Աստուծոյ հետ

## Առաջին քայլը

Աստուծոյ նպատակը.- Խաղաղութիւն եւ կեանք:



Աստուած կը սիրէ քեզ ու կ'ուզէ որ խաղաղութիւն եւ յաւիտենական կեանք ունենաս:

**Աստուածաշունչը կ'ըսէ.-**

« . . . խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքով»

Հռովմ. 5:1

« . . . ես եկայ որ կեանք ունենան եւ ալ աւելի ունենան»

Յովհ. 10:10

## Երկրորդ քայլը

Դժուարութիւնը.- Բաժանում



Աստուած մեզ իր պատկերովը ստեղծած է յաւիտենական կեանք ունենալու: Մենք մեքեայ չենք: Աստուած կամք տուած է: Երբ կ'ընտրենք անհնազանդութեան ճամբան, կը հեռանանք, կը բաժնուինք Աստուծմէ:

**Աստուածաշունչը կ'ըսէ.-**

«Ամէնը մեղք գործեցին, եւ Աստուծոյ փառքէն պակասած են:»

Հռովմ. 3:23

«Մեղքին վարձքը մահ է, բայց Աստուծոյ ձրի պարգեւը յաւիտենական կեանք, մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքով:»

Հռովմ. 6:23

## **Աստուծոյ Հասնելու մեր փորձերը**

Մարդեր տարբեր կերպեր փորձած են այդ պարապուրթիւնը կամրջելու

իրենց եւ Աստուծոյ միջեւ:

### **Աստուածաշունչը կ'ըսէ.-**

«Ճամբայ կայ որ մարդուն շիտակ կ'երեւնայ, բայց անոր վախճանը մահուան ճամբաներն են:» Առակ. 14:12

Մէկ միջոց կայ այդ պարապուրթիւնը գոցելու:

### **Երրորդ քայլը**

#### **Աստուծոյ կամուրջը.- Խաչը**



Յիսուս Քրիստոս մեռաւ խաչին վրայ ու գերեզմանէն յարութիւն առաւ: Ան մեր մեղքերուն գինը վճառեց ու կամուրջը ինք եղաւ Աստուծոյ եւ մարդուն միջեւ:

### **Աստուածաշունչը կ'ըսէ.-**

«Աստուած իր սերը զոր մեր վրայ ունէր՝ յայտնեց. երբ դեռ մեղաւոր էիք, Քրիստոս մեզի համար մեռաւ . . . »

Հռովմ. 5:8

### **Չորրորդ քայլը**

#### **Մեր Պատասխանը.- Քրիստոսը ընդունիլ**

Մենք վստահինք եւ ընդունինք Յիսուս Քրիստոսը, որպէս Տէր եւ Փրկիչ:

### **Աստուածաշունչը կ'ըսէ.-**

«Ահա ես դուռը կայներ եմ ու կը զարնեմ, եթէ մէկը իմ ձայնս լսէ ու դուռը բանայ, անոր քով պիտի մտնեմ եւ անոր հետ ընթրիք պիտի ընեմ, ան ալ ինձի հետ:» Յայտ. 3:20

«Որոնք որ գինք ընդունեցին, անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու, որոնք կը հաւատան իր անունին:» Յովհ. 1:12

## **Ի՞նչ վիճակի մեջ կը գտնուիս.-**

Կ'ուզե՞ս Աստուծոյ հետ խաղաղութիւն ունենալ:

Չետեւեալը ընելու ես:

1. Պետքդ գիտցիր (մեղաւոր ես ու փրկութեան պետք ունիս):
2. Կամեցողութիւն ունեցիր մեղքերդ խոստովանելու (ապաշխարելու):
3. Չաւատա թէ Յիսուս Քրիստոս քեզի համար, խաչին վրայ մեռաւ:
4. Աղօթե ու յանձնուէ Աստուծոյ:

## **Ի՞նչ Աղօթել.-**

Տէր, ես մեղաւոր եմ, ընդունէ զիս, իմ մէջս բարի բան մը չկայ: Քու շնորհքիդ կ'ապաւինիմ, դուն իմ մեղքերուս համար մեռար: Դուն առաջնորդէ զիս, քու կամքդ կատարող մը ըրէ զիս: Յիսուսի անունով, Ամէն:

## **Աստուծոյ Վստահութիւնը .- Իր Խօսքը**

### **Աստուածաշունչը կ'ըսէ.-**

«Ով որ Տէրոջը անունը կանչէ, պիտի փրկուի:»

Չռովմ. 10:13

Դուն աղօթեցի՞ր եւ հիմա Յիսուս Քրիստոս քու փրկի՞չդ է:

«Շնորհքով փրկուած էք դուք հաւատքի միջոցով. եւ այս ոչ թէ ձեզմէ է, հապա Աստուծոյ պարգեւն է . ոչ թէ գործերէն, որ մեկը չպարծենայ:»

Եփես. 2:8,9

Քրիստոսը ունենալով, մենք կը ծնինք Աստուծոյ ընտանիքին մէջ, այս Սուրբ Յոգիին գերբնական գործն է, հիմա Սուրբ Յոգին մեր մէջ կը բնակի: Ասիկա նոր ծնունդ է, վերստին ծնունդ: Այս ծնունդը սկիզբն է նոր եւ սքանչելի կեանքի մը որ միայն Քրիստոսով կ'ըլլայ:

Այս կեանքի մէջ (հաւատքի կեանքի մէջ) մեծնալու համար եւ փրկիչիդ հետ  
յարաբերութիւնդ զարգացնելու համար, պէտք ունիս.–

1. Ամէն օր Աստուածաշունչդ ընթերցելու:
2. Աղօթքով Աստուծոյ հետ խօսելու:
3. Քրիստոսի մասին ուրիշներու պատմելու:
4. Հաւատացեալներու հետ յարաբերելու:
5. Սէր եւ օգնութիւն ցոյց տալու:

Աստուած օրհնէ քեզ, ու հաստատէ այս նոր կեանքին մէջ:

